

Հավելված

Արտակարգ իրավիճակների նախարարության
Փրկարար ծառայության տնօրենի 2021 թվականի
մարտի 10-ի N 17/240-Լ հրամանի

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՇԽՈՒՄ

Ահն ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Տիգրան Պետրոսյանը պատասխանատու է հետևյալ ստորաբաժանումների և ոլորտների արդյունավետ գործունեության համար՝

1) Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչություն.

2) Քաղաքացիական պաշտպանության վարչություն.

3) Քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության հարցերով կառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգման բաժին.

4) Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն.

5) Լոռու մարզային փրկարարական վարչություն.

6) Տավուշի մարզային փրկարարական վարչություն.

7) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում միասնական պետական քաղաքականության, արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակման ու դրանց կատարման ապահովման, արտակարգ իրավիճակների հիմնահարցերով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման, արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրության և արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման.

8) քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակշրջանի փոխադրման պլանների մշակման ու դրանց կատարման

ապահովման, տարահանման պլանների և ծրագրերի մշակման, քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով բնակչության ուսուցման և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստման.

9) քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության բնագավառներում պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգման.

10) փրկարարական ծառայողների ուսուցման, մասնագիտական, ծառայողական, մարտական պատրաստության և զորահավաքային նախապատրաստության: